ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԳՀԾՁԲ-2018/5-ԵՊԲՀ»

ք.Երևան «15» «փետրվարի» 2018թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա.Ա.Մուրադյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Մեդսերվիս» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Մուրադյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է բժշկական սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9.100.000,00 (ինը միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	«Մեդսերվիս» ՍՊԸ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2	ՀՀ, Արարատի մարզ, գ. Այգեստան, Խանջյան 88
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	«Ինեկոբանկ» ՓԲԸ
հ/հ 11500166513800	Հ/Հ 2050422295131001
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ 04228699
Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան	էլ. հասցեն՝ medservice.am@gmail.com
	Հեռ. (095) 518875
	Տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Մուրադյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 15 » « 02 » 2018թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2018/5-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը*
6	50421100	Նայել ստորև կցված Հավելվածի N 6	հատ	1.650.000,00	11	ք.Երևան Հերացի 58	Փետրվար-Դեկտեմբեր
7	50421100	Նայել ստորև կցված Հավելվածի N 7	հատ	1.650.000,00	11	ք.Երևան Հերացի 58	Փետրվար-Դեկտեմբեր
8	50421100	Նայել ստորև կցված Հավելվածի N 8	դրամ	5.800.000,00	1	ք.Երևան Մուրացան 114	Պայմանագիր կնքելու օրվանից հաշված 15 օրացույցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ				**9.100.000,00**			

* 6-7 չափաբաժիններում ներառված ծառայությունների մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

ԳՆՈՐԴ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդսերվիս» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Այգեստան, Խանջյան 88
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050422295131001
ՀՎՀՀ 04228699
Էլ. հասցեն՝ medservice.am@gmail.com
Հեռ. (095) 518875
Տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը
6	50421100	1. Սարքավորումների սպասարկումն ընդգրկում է աշխատանքների այնպիսի համալիր, որը պետք է ապահովի սարքավորումների շահագործումը և տեխնիկական բարվոք վիճակի պահպանումը: 2. Սպասարկման աշխատանքները պետք է կատարվեն արտադրողի համապատասխան տեխնիկական ձեռնարկների պահանջների համաձայն, իսկ անհրաժեշտության դեպքում, նաև արտադրողի համապատասխան ծառայությունների համաձայնությամբ: 3. Սարքավորումների սպասարկման աշխատանքները ներառում են՝ 3.1. Անխափան սնուցման սարքի մարտկոցների փորձարկում ամիսը 1 անգամ: 3.2. Անխափան սնուցման սարքի ներքին կարգաբերումների ստուգում և շտկում ամիսը 1 անգամ: 3.3. Սարքավորման արտապլանային /վթարային/ վերանորոգման և կարգաբերման աշխատանքների իրականացում: Կատարողը արտապլանային /վթարային/ աշխատանքներ կատարելու համար Պատվիրատուին առանձին վճարման հաշիվ-ապրանքագիր չի ներկայացնում, եթե վթարը չի հանդիսանում շահագործման և պահպանման երաշխավորված գործընթացների կոպիտ խախտումների հետևանք, եթե սարքը չի վնասվել դիտավորյալ կամ անփույթ վերաբերմունքի պատճառներով, եթե անթույլատրելիորեն չեն խախտվել սարքի էներգակիրների մատակարարման պայմանները: Ոչ պլանային այցելությունների դեպքում տեղեկացնել այդ մասին պատվիրատուին այդպիսի աշխատանքներիը սկսելուց ոչ պակաս, քան 3 ժամ առաջ: Հատուկ դեպքերում, երբ անհրաժեշտ է իրականացնել առաջացած խնդիրների անհապաղ շտկման աշխատանքներ, Կատարողը կարող է տեղեկացնել Պատվիրատուին այդ աշխատանքները սկցելուց անմիջապես առաջ: 3.4. Սարքավորման շահագործմանը և պահպանմանը նպաստող միջոցառումների վերաբերյալ խորհրդատվական տեղեկությունների տրամադրում: 4, Կատարողը չի կրում որևէ պատասխանատվություն այլ աղբյուրներից /ոչ արտադրողից/ ձեռքբերած և օգտագործման համար տրամադրած պահեստամասերի շահագործման հետևանքով սարքավորման ոչ պիտանի դառնալու համար: 5. Սպասարկման աշխատանքների մատուցման պարբերականությունը և կատարման ժամկետները սահմանում է Կատարողը՝ արտադրողի կողմից համապատասխան ձեռնարկներում սահմանված սարքի տեխնիկական սպասարկման ծավալներին, ժամկետներին և տեխնոլոգիաներին համապատասխան, սակայն ոչ պակաս քան նշված է 3.1. և 3.2. կետերում: 6. Առանձին դեպքերում, բարդ վերանորոգման կամ կարգաբերման աշխատանքներ իրականացնելու համար Կատարողը պետք է ապահովի սարքի կամ սարքի համապատասխան հանգույցի տեղափոխումը Կատարողի համապատասխան արտադրամաս (սպասարկման կենտրոն) կամ արտադրող գործարան: 7. Սպասարկման աշխատանքները իրականացվում են միայն սույն պայմանագրով նախատեսված սարքավորումների համար, այն իր մեջ չի ներառում հարակից կամ օժանդակ այլ սարքավորումների սպասարկում, թեկուզև դրանք ապահովում են սարքավորման բնականոն աշխատանքը: 8. Սպասարկման աշխատանքները, որպես կանոն, իրականացվում են աշխատանքային օրերին և ժամերին:

7	50421100	1. Սարքավորումների սպասարկումն ընդգրկում է աշխատանքների այնպիսի համալիր, որը պետք է ապահովի սարքավորումների շահագործումը և տեխնիկական բարվոք վիճակի պահպանումը: 2. Սպասարկման աշխատանքները պետք է կատարվեն արտադրողի համապատասխան տեխնիկական ձեռնարկների պահանջների համաձայն, իսկ անհրաժեշտության դեպքում, նաև արտադրողի համապատասխան ծառայությունների համաձայնությամբ: 3. Սարքավորումների սպասարկման աշխատանքները ներառում են՝ 3.1. Այցելություն, ամիսը 4 անգամ: 3.2. Բոլոր անհրաժեշտ պահեստամասերի փոխարինում, վերանորոգում և կարգավորում բացառությամբ կոմպրեսորի, հովացուցչի, պոմպի, մարտկոցների /ռադիատորների/ և կառավարման պրեցոսորի ինչպես նաև նրան ենթակա էլեկտրական հանգույցների: 3.3.. Սարքավորման տեխնիկական վիճակի պարբերաբար զննում, կանխարգելիչ աշխատանքների և միջոցառումների իրականացում, հայտնաբերած թերությունների վերացում և սարքավորման կարգաբերում, 3.4. Սարքավորման վերականգնողական աշխատանքների իրականացում, 3.5. Սարքավորման՝ արտադրողի կողմից նախատեսված տեխնիկական կամ ծրագրային արդիականացման իրականացում, 3.6. Սարքավորման արտապլանային /վթարային/ վերանորոգման և կարգաբերման աշխատանքների իրականացում: Կատարողը արտապլանային /վթարային/ աշխատանքներ կատարելու համար Պատվիրատուին առանձին վճարման հաշիվ-ապրանքագիր չի ներկայացնում, եթե վթարը չի հանդիսանում շահագործման և պահպանման երաշխավորված գործընթացների կոպիտ խախտումների հետևանք, եթե սարքը չի մնասվել դիտավորյալ կամ անփույթ վերաբերմունքի պատճառներով, եթե անթույլատրելիորեն չեն խախտվել սարքի էներգակիրների մատակարարման պայմանները: Ոչ պլանային այցելությունների դեպքում տեղեկացնել այդ մասին պատվիրատուին այդպիսի աշխատանքներիը սկսելուց ոչ պակաս, քան 3 ժամ առաջ: Հատուկ դեպքերում, երբ անհրաժեշտ է իրականացնել առաջացած խնդիրների անհապաղ շտկման աշխատանքներ, Կատարողը կարող է տեղեկացնել Պատվիրատուին այդ աշխատանքները սկցելուց անմիջապես առաջ: 3.7. Սարքավորման շահագործմանը և պահպանմանը նպաստող միջոցառումների վերաբերյալ խորհրդատվական տեղեկությունների տրամադրում: 3.8. Կատարողի կողմից և Կատարողի հաշվին փոխարինվող, վերանորոգվող և կարգաբերվող պահեստամասերի ցանկ 1. Ֆիլտրներ 2. Գլիկոլ 3. Թորած ջուր 4. Կոմպրեսորի յուղ 5. Գազ 410 6. Պղնձե խողովակներ 7. Էլեկտրական մալուխներ 8. Էլեկտրական ավտոմատ 9. Էլեկտրական ապահովիչ 4. Սպասարկումն իր մեջ ներառում է նաև Կատարողի կողմից անհրաժեշտ աշխատանքների կատարման համար 3.8. կետում չնշված պահեստամասերի մատակարարում: Ընդ որում, Կատարողը չի կրում որևէ պատասխանատվություն այլ աղբյուրներից /ոչ արտադրողից/ ձեռքբերած և օգտագործման համար տրամադրած պահեստամասերի շահագործման հետևանքով սարքավորման ոչ պիտանի դառնալու համար:

		5. Լրացուցիչ դեպքերում սպասարկման աշխատանքների մատուցման պարբերականությունը և կատարման ժամկետները սահմանում է Կատարողը՝ արտադրողի կողմից համապատասխան ձեռնարկներում սահմանված սարքի տեխնիկական սպասարկման ծավալներին, ժամկետներին և տեխնոլոգիաներին համապատասխան: 6. Առանձին դեպքերում, բարդ վերանորոգման կամ կարգաբերման աշխատանքներ իրականացնելու համար Կատարողը պետք է ապահովի սարքի կամ սարքի համապատասխան հանգույցի տեղափոխումը Կատարողի համապատասխան արտադրամաս (սպասարկման կենտրոն) կամ արտադրող գործարան: 7. Սպասարկման աշխատանքները իրականացվում են միայն սույն պայմանագրով նախատեսված սարքավորումների համար, այն իր մեջ չի ներառում հարակից կամ օժանդակ այլ սարքավորումների սպասարկում, թեկուզև դրանք ապահովում են սարքավորման բնականոն աշխատանքը: 8. Սպասարկման աշխատանքները, որպես կանոն, իրականացվում են աշխատանքային օրերին և ժամերին: 9. Սույն պայմանագրով նախատեսված սպասարկման աշխատանքների մատուցման վերաբերյալ Կատարողը բացի հանձման-ընդունման ակտից ձևակերպում է սպասարկման հաշվետվություն՝ լրացնելով կազմակերպության հատուկ ձևաթուղթը: Սպասարկման հաշվետվությունը ստորագրվում է Կատարողի մասնագետի և Պատվիրատուի (սարքավորումը շահագործող պատասխանատուի անձի) կողմից, որոնցից մեկ օրինակը հանձնվում է Պատվիրատուին (սարքավորումը շահագործող պատասխանատուի անձին): 10. Մատուցված սպասարկման աշխատանքների համար հաշիվ-ապրանքագիր ձևակերպելու համար հիմք է հանդիսանում ստորագրված սպասարկման հաշվետվությունը:
8	50421100	1. Բժշկական թթվածնի պղնձյա խողովակների տրամադրում և մոնտաժում 4 կետի համար 2. 4 հատ բժշկական թթվածնի ավտոմատ փականների տրամադրում և մոնտաժում: 3. Կորոբների տրամադրում և մոնտաժում բժշկական թթվածնի պղնձյա խողովակների մեկուսացման համար 4. 5 հատ բժշկական թթվածնի եռկետանի բաշխիչների տրամադրում և մոնտաժում 5. 15 հատ բժշկական թթվածնի բաշխիչների բարձր ճնշման խողովակների տրամադրում և մոնտաժում 6. 4 հատ բժշկական թթվածնի ֆլոումետր-խոնավացուցիչների տրամադրում և մոնտաժում 7. Բժշկական թթվածնի պղնձյա խողովակաշարի վրա ոչ պակաս, քան՝ 10 թթվածնային փականների տրամադրում և մոնտաժում 8. Բժշկական պղնձյա խողովակների տրամադրում և մոնտաժում օդային համակարգի խողովակաշարի համար 9. Բժշկական խտացված օդի չորացման համակարգի տրամադրում և մոնտաժում ոչ պակաս, քան՝ 200լ/ր օդի անցկացման հնարավորությամբ **Ծառայությունների իրականացման համար անհրաժեշտ պարագաների տեխ.բնութագիր** 1. Բժշկական թթվածնի ավտոմատ փականներ (outlate) կցորդիչներով - բժշկական թթվածնի ավտոմատ փականներ գերմանական ստանդարտի, բրոնզյա, գլանաձև, արտաքին տրամագիծը ոչ պակաս, քան՝ 27 մմ., կցորդիչի մտնող տրամագիծը ոչ ավել, քան՝ 13 մմ., երկարությունը ոչ ավել, քան՝ 41 մմ., կցումը խողովակաշարին 1/2" շտուցերի միջոցով, փականի վրայի պարույրները 1/2" արտաքին, կցորդիչի հետ կցումը փականի ասեղների միջոցով, տակդիրները նախատեսված լինեն թթվածնի հետ շփման համար ու համապատասխանեն թթվածնի հետ շփման անվտանգությանը:

		2. Պղնձյա խողովակներ - 20, 16, 12, 10 և 8 մմ. տրամագծերով պղնձյա խողովակներ, պատերի հաստությունը ոչ պակաս, քան՝ 0,8 մմ. Ø20մմ տրամագծով խողովակների երկարությունը ոչ պակաս, քան՝ 70մ Ø16մմ տրամագծով խողովակների երկարությունը ոչ պակաս, քան՝ 30մ Ø12մմ տրամագծով խողովակների երկարությունը ոչ պակաս, քան՝ 30մ Ø10մմ տրամագծով խողովակների երկարությունը ոչ պակաս, քան՝ 45մ Ø8մմ տրամագծով խողովակների երկարությունը ոչ պակաս, քան՝ 45մ 3. Բժշկական թթվածնի փականներ - նախատեսված բժշկական թթվածնի պղնձյա խողովակաշարի վրա տեղադրելու համար, նախատեսված 12 մմ. պղնձյա խողովակի համար, կցումը պղնձյա խողովակին SWAGELOK տիպի, բրոնզյա կամ չժանգոտվող մետաղից, ոչ պակաս, քան՝ 200 լիտր/րոպե թողունակությամբ, տակդիրները նախատեսված լինեն թթվածնի հետ շփմանն ու համապատասխանեն թթվածնի հետ շփման անվտանգությանը: 4. Կորոբ 5. Թթվածնային ֆլոումետր խոնավացուցիչ - պատին ամրացվելու հնարավորությամբ, ծայրակալները WURT ստանդարտի, ֆլոումետրի կորպուսը բարձրորակ չժանգոտող պողպատից, փականային համակարգը բարձրորակ չժանգոտող մետաղից, բարձր խտության պոլիմերային ֆիլտրից, բարձր ջերմության և գոլորշու պայմաններում ստերիլիզացվող խոնավացուցիչ, գազի տեսակը բժշկական թթվածին, աշխատանքային ճնշումը ոչ պակաս, քան՝ 75psi, հոսքի մաքսիմալ արագությունը ոչ պակաս, քան՝15լ/րոպե, կարգավորվող հոսքի արագություն, խոնավացուցչի տարողունակությունը առնվազն 170 մլ., չափսերը ոչ ավել քան 105x60x305մմ.: 6. Բժշկական թթվածնի եռկետանի բաշխիչ - բժշկական թթվածնի եռկետանի բաշխիչ ոչ պակաս, քան 250 բար ճնշման տակ աշխատելու հնարավորությամբ, բարձր որակի բրոնզե մետաղից, 3 հատ ոչ պակաս, քան՝ 250 բար ճնշման տակ աշխատելու հնարավորությամբ բարձր որակի բրոնզե 3/4" մուտքային արտաքին պարույրներով թթվածնային փականներով, ոչ պակաս, քան՝ 250 բար ճնշման տակ աշխատելու հնարավորությամբ բժշկական ռեդուկտորով: 7. Բժշկական թթվածնի բաշխիչի բարձր ճնշման խողովակ - բժշկական թթվածնի բաշխիչի բարձր ճնշման խողովակ նախատեսված ոչ պակաս, քան՝ 250 բար ճնշման տակ աշխատելու համար ճկուն, պատրաստված ռետինե խողովակից և չժանգոտվող մետաղից, երկարությունը ոչ պակաս, քան՝ 90 սմ, թթվածնի հոսելու անցքի տրամագիծը ոչ պակաս, քան՝ 5 մմ, 2 ծայրի ծայրակալները 3/4" ներքին պարույրներով միացուցիչներ: 8. Բժշկական խտացված օդի չորացման համակարգ – ոչ պակաս, քան՝ 200լ/րոպե օդի անցկացման հնարավորությամբ, բժշկական խտացված օդի ջրային կոնդենսատը ջրի վերածելու և հեռացնելու հնարավորությամբ:

ԳՆՈՐԴ

«Երևանի Մխիթար Հերացու
անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդսերվիս» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Այգեստան,
Խանջյան 88
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050422295131001
ՀՎՀՀ 04228699
Էլ. հասցեն՝ medservice.am@gmail.com
Հեռ. (095) 518875
Տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 15 » « 02 » 2018թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2018/5-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
6	50421100	GE Medical Systems-ի արտադրության Brivo MR355 մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիկ համակարգի անխափան սնուցման սարքավորում UPS սպասարկման ծառայություն	-	150.000.00	300.000.00	450.000.00	600.000.00	750.000.00	900.000.00	1.050.000.00	1.200.000.00	1.350.000.00	1.500.000.00	1.650.000.00	**1.650.000.00**
7	50421100	GE Medical Systems-ի արտադրության Brivo MR355 մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիկ համակարգի կլիմատիկ և հովացման համակարգ Chiller սպասարկման ծառայություն	-	150.000.00	300.000.00	450.000.00	600.000.00	750.000.00	900.000.00	1.050.000.00	1.200.000.00	1.350.000.00	1.500.000.00	1.650.000.00	**1.650.000.00**
8	50421100	«Մուրացան» համալսարանական կլինիկայի բժշկական թթվածնի խողովակների, բժշկական թթվածնի բաշխիչների և բժշկական թթվածնի ավտոմատ փականների մոնտաժում և տեղադրում	-	5.800.000,00	5.800.000,00	5.800.000,00	5.800.000,00	5.800.000,00	5.800.000,00	5.800.000,00	5.800.000,00	5.800.000,00	5.800.000,00	5.800.000,00	**5.800.000,00**

ԸՆԴԱՄԵՆԸ	-	6.100.000.00	6.400.000.00	6.700.000.00	7.000.000.00	7.300.000.00	7.600.000.00	7.900.000.00	8.200.000.00	8.500.000.00	8.800.000.00	9.100.000.00	**9.100.000.00**

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ

ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ

հ/հ 11500166513800

ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդսերվիս» ՍՊԸ

ՀՀ, Արարատի մարզ, գ. Այգեստան, Խանջյան 88

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2050422295131001

ՀՎՀՀ 04228699

էլ. հասցեն՝ medservice.am@gmail.com

Հեռ. (095) 518875

Տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Մուրադյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 3
« » « » 2018թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2018/5-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« » « » 2018թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2018/5-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն